

CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN



ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 583 841
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

__30.09.2016թ.____ N __08.1-04/000726-16__
_____Ձեր N _____

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
պարոն Կարեն Կարապետյանին

Մեծարգո պարոն Վարչապետ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 163 Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը»:

Առդիր՝ 5 թերթ:

 Recoverable Signature

X

Հարգանքով՝ Signed by: JAVADYAN ARTUR 3204640124

Արթուր Զավադյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ
050.0163 Ա. 30.09.16

30 սեպտեմբերի 2016 թվականի թիվ 163 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական
բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

2016 թ. սեպտեմբերի 30
Երևան



Արթուր Զավադյան

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

**1. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի կադրաման գործընթացը**

Տնտեսական աճը 2016 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, ձևավորվել է համաշխարհային տնտեսության աճի դանդաղ տեմպերի պահպանման և ՀՀ տնտեսությունում արտահանելի հատվածի աճի պայմաններում: Միևնույն ժամանակ, տնտեսական աճի զարգացումները, տարվա առաջին ութ ամիսներին, ընթացել են աստիճանական նվազման ուղղությամբ: Թերևս, տարվա առաջին եռամսյակում արձանագրված տնտեսական աճի սպասվածից բարձր՝ 4,5 տոկոս մակարդակը, կրկնակի անգամ գերազանցելով ՀՀ պետական բյուջեի 2016 թվականի ծրագրում կանխատեսված 2,2 տոկոս ցուցանիշը, զգալի լավատեսական սպասումներ առաջացրեց տնտեսական աճի ակնկալիքների մասով: Սակայն, երկրորդ եռամսյակում արդեն նկատվեց տնտեսական աճի տեմպերի դանդաղում, որի պարագայում տարվա առաջին կեսի տնտեսական աճը կազմեց 2,8 տոկոս: Ընդ որում, դանդաղումը շարունակվեց նաև հուլիս և օգոստոս ամիսներին՝ արդյունքում հուլիս-օգոստոս ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ձևավորվեց բացասական տիրույթում: Հունվար-օգոստոս ամիսների տնտեսական ակտիվության աճը ձևավորվել էր հիմնականում արդյունաբերության, ծառայությունների և փոքր-ինչ գյուղատնտեսության ճյուղերի աճի շնորհիվ:

2016 թվականի առաջին ութ ամիսների ընթացքում շարունակվել է թույլ ներքին պահանջարկի ձևավորումը, որը դրսևորվել է ինչպես մասնավոր սպառմանն ուղղված ծախսերի կրճատմամբ, այնպես էլ ներդրումային թույլ միջավայրի պահպանմամբ: Նշենք սակայն, որ ներքին պահանջարկի թույլ միջավայրն էականորեն մեղմվել է 2015 թվականից սկսված՝ շարունակական բնույթ կրող դրամավարկային պայմանների թուլացման, ինչպես նաև տնտեսությունում առկա ցածր գնաճային միջավայրի միջոցով: Այդուհանդերձ, դեռևս թույլ ներքին պահանջարկի պայմաններում 2016 թվականի տնտեսական աճին հիմնականում նպաստել է զուտ արտահանումը՝ պայմանավորված արտահանելի հատվածի դրական

զարգացումներով: Վերջինս, ուղեկցվելով ներմուծման կրճատմամբ, հանգեցրել է ընթացիկ հաշվի պակասուրդի էական ցածր մակարդակի ձևավորմանը:

Հարկաբյուջետային քաղաքականությունը տարվա առաջին ութ ամիսներին ընթացել է հարկերի ծրագրված մակարդակների թերի հավաքագրմամբ, իսկ ծախսերի մասով արձանագրվել է պետական ծախսերի ծրագրված մակարդակների կատարման նախորդ տարվա համեմատ ավելի բարձր ցուցանիշ, ինչը հանգեցրել է բյուջեի պակասուրդի ծրագրված մակարդակի զգալի գերազանցման: ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները տարվա ութ ամիսներին նվազել են 0,9 տոկոսով, իսկ հարկային եկամուտները աճել են 0,4 տոկոսով՝ տարվա համար նախատեսված 5,9 տոկոս աճի դիմաց¹: Պետական բյուջեի ծախսերը տարվա առաջին ութ ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ապահովել են 2.6 տոկոս աճ: Նշված զարգացումների ներքո գնահատվում է, որ 2016 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 5,9 տոկոսը զգալիորեն՝ 2,4 տոկոսային կետով գերազանցելով տարվա համար նախատեսված մակարդակը և 1.1 տոկոսային կետով՝ 2015 թվականի պակասուրդի փաստացի մակարդակը: Վերջինս, բնականաբար, հանգեցրել է պետական պարտքի աճի, որը, ըստ գնահատականների, տարվա արդյունքում կգերազանցի պարտք/ՀՆԱ 50 տոկոս սահմանային ցուցանիշը: Արդյունքում, 2016 թվականի առաջին ութ ամիսների ընթացքում ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն:

Հարկ է նշել, որ հարկաբյուջետային և դրամավարկային ընդլայնող քաղաքականությունների արդյունավետ կոորդինացման շնորհիվ հաջողվել է նվազեցնել պետական ներքին պարտքի տոկոսադրույքները: Այսպես, ընթացիկ տարվա հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական կարճաժամկետ արժեթղթերի միջին տոկոսադրույքը կազմել է 7,95՝ անցած տարվա նույն ժամանակահատվածի 11,87 տոկոսի դիմաց, միջինժամկետ արժեթղթերինը՝ 11,49՝ նախորդ տարվա 14,25 տոկոսի դիմաց, իսկ նույն ժամանակահատվածում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 9,76 տոկոս նախորդ տարվա 13,95 տոկոսի դիմաց²:

Այսպիսով, 2016 թվականի հարկաբյուջետային ընդլայնող քաղաքականությունը ուղեկցվելով դրամավարկային պայմանների շարունակական թուլացմամբ, չնայած խթանող ազդեցություն է ունեցել համախառն պահանջարկի վրա, սակայն հանգեցրել է պետական պարտքի աճի: Այս պայմաններում, կարևորվում է կառուցվածքային

¹ 2016 թվականի առաջին ութ ամիսների փաստացի թվերը ՀՀ ֆինանսների նախարարության նսխնական տվյալներն են: 2016 թ. ութ ամիսների արդյունքներով՝ պետական բյուջե է հավաքագրվել 696.1 մլրդ դրամ հարկային եկամուտ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 693.5 մլրդ դրամի դիմաց:

² Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տվյալները:

բարեփոխումների և հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման միջոցով նախապայմաններ ապահովել երկարաժամկետ հատվածում տնտեսական կայուն աճի ձևավորման համար:

**2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

Ուղղորդվելով երկրում բնակչության բարեկեցության աճի ապահովման և աղքատության հաղթահարման՝ ՀՀ իշխանությունների գերակա նպատակի իրագործման խնդրով, միևնույն ժամանակ հավատարիմ մնալով մակրոտնտեսական կայունության շարունակական ապահովման ռազմավարության սկզբունքներին, ՀՀ կառավարությունն իր ջանքերն ուղղելու է տնտեսական աճի տեմպերի արագացմանը: Այսպիսով, 2017 թվականի համար նախատեսվում է տնտեսական աճի տեմպի արագացում (3,2 տոկոս), պայմանավորված ինչպես արտաքին զարգացումներով՝ մասնավորապես Ռուսաստանի տնտեսական աճի զարգացման միտումներով, այնպես էլ 2017 թվականին իրականացվելիք մի շարք բարեփոխումների ու 2016 թ. իրականացված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությամբ: Հատկանշական է, որ 2017 թվականին տնտեսական ծրագրերի իրականացման ընթացքում ՀՀ կառավարությունը հիմնական շեշտը դնելու է բյուջեի եկամուտների և այլ ռեսուրսների արդյունավետ վերաբաշխման վրա, միաժամանակ շարունակելով 2016 թվականի ընթացքում նախաձեռնած բյուջետային ծախսերի օպտիմալացման և կրճատման իրականացումը: Դրանց շնորհիվ հնարավոր կլինի տնտեսական աճի կայունացմանը նպաստելուն զուգահեռ իրականացնել պակասուրդի էական կրճատման քաղաքականություն: Այս պայմաններում, կարևորվում է, որ ՀՀ կառավարության միջոցառումներն ուղղված լինեն գործարար և ներդրումային միջավայրի կտրուկ բարելավմանը և մրցունակության բարձրացման ապահովմանը:

Հարկ է նշել, որ 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում հաշվի են առնվել հնարավոր բոլոր ռիսկերն ու անորոշությունները, գնահատվել են հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում բյուջեի ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի վրա:

Այդուհանդերձ, վերադառնալով բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականությանը և այն զուգորդելով տնտեսական աճը խթանելու կարևոր նախապայմանի ապահովմամբ, 2017 թվականի համար նախատեսվում է ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդի կրկնակի անգամ նվազում՝ ապահովելով ՀՆԱ-ի 2,8 տոկոսը՝ 2016 թվականին նախատեսված 3,5 և տարվա համար կանխատեսված 5,9 տոկոսի դիմաց: Այս պարագայում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականի

պետական բյուջեի պակասուրդը էապես կրճատվում է, ապա երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար կարևորվում է մասնավոր ներդրումների էական աճի ձևավորումը:

Պետական բյուջեի եկամուտների մասով 2017 թվականի բյուջեի ծրագիրն արտացոլում է միջինժամկետ ծրագրերով նախատեսված սկզբունքների պահպանում, որի շրջանակներում ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտների տեսակարար կշռի 0,3 տոկոսային կետ աճ (2016 թվականի հաստատվածի դիմաց), ինչի պարագայում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2017 թվականին կկազմի 21,0 տոկոս:

Այսպիսով, գնահատվում է, որ 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրի իրականացումը համախառն պահանջարկի վրա կունենա զսպող ազդեցություն, որի պարագայում 2017 թվականի տնտեսական աճի ապահովման հիմնական բեռը ընկնում է լայնածավալ կառուցվածքային բարեփոխումների վրա: Այդ ամենը, զուգակցվելով հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի շարունակականության ապահովման և դրանք դրամավարկային քաղաքականության հետ արդյունավետ կոորդինացմամբ, կնպաստեն մակրոտնտեսական կայունությանը՝ կայուն հիմքեր ստեղծելով տնտեսական աճի համար երկարաժամկետ հատվածում: